ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով,134-րդ և 145-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 30.09.2022թ.-ի որոշմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու է առաջադրվել Նունե Սուրիկի Հովհաննիսյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Արփինե Դավոյանը:

Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կից ներկայացվում են.

1. թեկնածուի առաջադրման վերաբերյալ խմբակցության 30.09.2022թ.-ի որոշումը,
2. թեկնածուի նույնականացման քարտի պատճենը,
3. թեկնածուի կենսագրությունը,
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու համար թեկնածուի՝ 30.09.2022թ.-ի գրավոր համաձայնությունը

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

03.10.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 134-րդ և 145-րդ հոդվածներով՝ խմբակցությունը որոշեց.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու առաջադրել Նունե Սուրիկի Հովհաննիսյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Արփինե Դավոյանը:

3.Խմբակցության որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

30.09.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Նունե Սուրիկի Հովհաննիսյան, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 4.1-ին մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՆՈՒՆԵ ՍՈՒՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

30.09.2022թ.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՒՆԵ ՍՈՒՐԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1969 թվականի օգոստոսի 4-ին, Երևանում:

1986թ. ավարտել է Երևանի թիվ 114 անգլիական թեքումով միջնակարգ դպրոցը:

1994թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1986-1990թթ. աշխատել է Երևանի Կլարա Ցետկինի անվան կարի ֆաբրիկայում, Երևանի միջքաղաքային հեռախոսային կայանում, Գուգարք կոոպերատիվում որպես բանվորուհի:

1990-1993թթ. աշխատել է Երևանի Խորհրդային շրջանի ժողդատարանում որպես դատական նիստերի քարտուղար:

1993-1995թթ. աշխատել է ՀՀ Գերագույն խորհրդի իրավական հարցերի մշտական հանձնաժողովում որպես գործավար:

1995-1996թթ. աշխատել է ՀՀ Գերագույն խորհրդի իրավաբանական բաժնի, տեղեկատվական իրավական ապահովման և կոդիֆիկացիոն աշխատանքների ենթաբաժնում որպես վիճակագիր:

1996-1997թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական բաժնում որպես խորհրդատու:

1997-1998թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական ծառայության դատական վերափոխումների իրավական ապահովման բաժնում որպես ավագ խորհրդատու:

1998-2002թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական վարչության, քրեական և վարչական օրենսդրության փորձաքննության բաժնում որպես գլխավոր մասնագետ:

2002-2014թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական վարչության պետ:

2014թ. հունիսին նշանակվել և 2016թ. հոկտեմբերին ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

2009 թ. ներկայացնում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Մարդու իրավունքների շուրջ ՀՀ-ԵՄ երկխոսության նիստերին:

2004-2005թթ. դասավանդել է Հայ-սլավոնական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ ընտրական իրավունք, ընտրական գործընթաց: 2006թ-ից. ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների, տեխնիկական սարքավորությունները սպասարկող մասնագետների մասնագիտական դասընթացների ուսուցանող է, ՀՀ ընտրական օրենդրությանը և վարչարարությանը վերաբերող մի շարք ուսումնական ձեռնարկների (ուղեցույցների) հեղինակ:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

30.09.2022թ.